

## ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԱՆԽՈՆՉ ՀԵՏԱԶՈՏՈՂԸ



Ռունիսի 5-ին, կյանքի 70-րդ տարվա շեմին, ի Տեր հանգյավ Հայ Եկեղեցու նոր շրջանի պատմության ամսոնց հետազոտող և հմուտ արխիվագեր Սանդր Արքաշեսի Բեհբույյանը:

Ծնվել է 1934 թ. հոկտեմբերի 18-ին պատմական Արցախի Նորիսի (Շարի) քաղաքում: Ավարտելով ծննդավայրի դպրոցը, 1953 թ. ընդունվում է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարան, որը 1959 թ. ավարտում է գերազանց զնահարականներով: Շարունակելով ուսումնառությունը, այնուհետև ընդունվում է Երևանի Պետրական Համալսարանի Բանսահրական ֆակուլտետ, որն ավարտում է 1968 թ.:

Եղել է «Էջմիածնի» ամսագրի բարդուղար,

ճեմարանի գրադարանի վարիչ: 1960 թվականից աշխատանքի է անցել համբավերության արխիվային համակարգում՝ նախ որպես գիրաշխատող, ապա և՝ բաժնի վարիչ: Վերջին դարին երիտ Պետրական արխիվին գուզընթաց նա աշխատում էր նաև Մայր Աթոռի արխիվային բաժնում:

1973 թ. նշանակվել է տնօրեն նորաստեղծ Հայ պարբերական մամուլի պետրական կենտրոնական արխիվի, որը 1968 թ. անվանափոխվել և դարձել է Գրականության, արվեստի և մամուլի փաստաթուղթերի կենտրոնական պետրական արխիվ (այժմ՝ Մշակույթի արխիվ):

Արխիվային բնագավառի այս ջրու փասնամյակների աշխատանքն ամփոփվեց «Աւագերքեր Հայ Եկեղեցու պատմության» շարքի արդեն իսկ լույս գետսած 11 հավորներում, որոնք իրար եփնից սկսեցին հրապարակվել 1994 թվականից: Առաջին հավորը ներկայացնում էր Հայոց Եկեղեցու դեմ 1920-1930-ական թթ. ծավալված բռնությունները և հալածները: Երկրորդ և երրորդ հավորները նվիրված են այդ հալածանքներին գոհ զնացած նորօրյա նահապակ հոգևորականներ Խորեն Ա Մուրադի կյանին և Արքակ Եպիսկոպոս Սմբապյանցին: Հաջորդող հավորները համապատասխանաբար նվիրված են Խորիմյան Հայրիկին, Հայոց Եկեղեցու գործունեությանը Հայաստանի Առաջին Հանրապետության դարիներին, Գևորգ Զ Զորեքցյանին, Մարթևոս Ա Իգմիրյանին, Գարեգին Ա Դովսեփյանին, Արցախի թեմին, Ներսես Պատրիարք Վարժապետյանին և Տիրան արքապիսկոպոս Ներսոյանին:

11 այս հավորներից յուրաքանչյուրն ընդգրկում է բազմահարյուր վավերագրեր ու հրապարակումներ, որոնք Սանդր Արքաշեսի Բեհբույյանը հավաքելով դարձել արխիվային պահոցնե-

րից՝ վերծանել, ոուսերնն արծանազրությունները հայերն է թարգմանել, ներկայացվող յուրաքանչյուր միավորը բուն հրապարակումից առաջ վերնազրել համառուր վերաշրադրմամբ և այս ամենը դասավորել ըստ ժամանակագրական ընթացքի՝ հագործներից յուրաքանչյուր օժիտելով նաև անձնանունների ցանկերով:

Այս հագործները ոչ միայն նոր լույսն են սփոռում, այլև զայխ նորովի լուսաբանելու 19-20-րդ դարերի Հայոց Եկեղեցու պարմության մի շարք հանգուցային հարցերը, ցոյց դալիս, թե ինչ ծանրազոյն պայմաններում է Ս. Էջմիածինը 1920-1930-ական թթ. իրականացրել հայ ժողովրդի հոգևոր կենտրոնի իր առաքելությունը:

Այս հագործներն աղբյուրագիրական այն հիմքերն են, որոնց վրա մեծապես խարսխվելու է Հայ Եկեղեցու նոր շրջանի պարմության ուսումնասիրությունը:

Վավերագրերի հրապարակման արդյունաշար այս գործունեությանը զուգընթաց Սանդր Բեկրույշանը երկար դարիներ Հայոց Եկեղեցու պարմություն է դասավանդել Սևանի Վազգենյան Դպրանցում ու Երևանի Պետական Համալսարանում:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձր գնահատելով Սանդր Բեկրույշանի՝ Հայոց Եկեղեցուն և Ս. Էջմիածինի միաշաղախված նրա գիրա-մանկավարժական գործունեությունը, 2000 թ. հոկտեմբերի 29-ի Սրբադրության կողմանը նրան պարզեցաքրեց Հայոց Եկեղեցու «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով: Նորին Սրբությունը հայրապետական կոնդակում այսպէս է զնահագում Հայոց Եկեղեցուն թերած նրա դասանմակների ծառայությունը. «Դուք Ձեր կյանքի ողջ ընթացքին, իբրև հավաքարիմ ու նվիրյալ զավակ Առաքելական մեր Մայր Եկեղեցու, հոգևոր ու մբավոր Ձեր ողջ կարողություններն անմնացրող կերպով ի սպաս եք դրեկ հանուն նրա շինության ու պայծառության: Ձեր ուսերն, արդարն, ծանրաբեռն են ազգօգուր ու եկեղեցաշն բազմարյուն վասդակով:

Տասնամյակներ շարունակ Դուք կենդանության շունչ եք հաղորդել խունացած փառքարդերին՝ լուսաբանելով Հայոց Եկեղեցու պարմության նոր շրջանի փակ էջերը»:

**«Յիշալրակն արդարոյն օրինութեամբ եղիցի»:**

**ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ**